ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 4

N ՀՀ ԿԱ Ո-ՄԵԱՊՁԲ-ՇԻՆ/2016/Գ/ԾՈ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան <<27>> 12 2017թ.

ՀՀ ոստիկանությունը, ի դեմս ոստիկանության պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ Ա. Համբարյանի, որը գործում է ոստիկանության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Գոհարիկ>> ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ս. Խաչատրյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 21.12.2017թ. թիվ 1652-Ա որոշումը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը /այսուհետև՝ Համաձայնագիր/ հետևյալի մասին.

**1.Համաձայնագրի առարկան և գործողության ժամկետը**

1.1 Սույն Համաձայնագրով կողմերը համաձայնության եկան **ՀՀ ԿԱ Ո-ՄԵԱՊՁԲ-ՇԻՆ/2016/Գ/ԾՈ** ծածկագրով պայմանագրի թիվ 2 հավելվածում նախատեսված շինարարական աշխատանքների կատարման վերջնաժամկետը սահմանել մինչև 2018 թվականի սեպտեմբերի 1-ը ներառյալ:

**2. Այլ պայմաններ**

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքներն ու պարտականությունները, Աշխատանքի կատարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.4 Սույն Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու բնօրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

2.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ԿԱ ոստիկանությունը:

**3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ու**

**ՀՀ ոստիկանություն**
**ք. Երևան, Նալբանդյան 130**
**ՀՀ Ֆինանսների նախարարության**
**աշխատակազմի գործառնական վարչություն**
**Հ/Հ 900013150041**
**ՀՎՀՀ 01840082**
**հեռ. 59-61-52**
**Էլ. հասցե: police-gnumner@rambler.ru**

Ա. Համբարյան
/ՀՀ ոստիկանության պետի տեղակալ/
(ստորագրություն) Կ.Տ

**Կ Ա Պ Ա Լ Ա Ռ Ու**

**«Գոհարիկ» ՍՊԸ**
**Շիրակի մարզ գ. Գետափ**
**<<Արդշինբանկ>> ՓԲԸ Արթիկ մ/ճ**
**Հ/Հ 2470400992660000**
**ՀՎՀՀ 06104997**
**էլ. հասցե՝ goharikspy@rambler.ru**

Ս. Խաչատրյան
/տնօրեն/
(ստորագրություն) Կ.Տ